66. ԹԱԳԱՎՈՐՈՒ ԼԱՃ ԵՎ ԿԱՐԻՃ

Կէլնի չէլնե, կէլնի մեյ թագավոր:

Ասրված իսոր մեյ խապ լաճ-տղա կուտա: Քյառսուն օր, քյառսուն գիշեր ուր սարի մեջ ուրախութեն անել կուտա, կզանեն կխաղան:

Թագավուրու կարդայվորներայ մեկը ռամ կթալի նոր էլած լաճու խամար, կասի որ. - Թագավոր ապրած կենա, էսա տղեն չյում տասնխիյնգ տարեկան չափին խասնի, ինոր ձեռայ ափը կարիճ պիտի կծի. իսոր մախը էնտեղիյ -պիտի էլնի:

Թագավոր էսա խաբար որ կլսի, շա՛տ, շա՛տ կտրտմի, կմտմտա, կասի. «Կարիճը մեջ խողին կէլնի, ես իմ տղեն ըսկուն տեղ պիտի շախել-պախել տամ, որ էնտեղ չէ թե կարիճ, օձն ուր պոռտով, խավքն ուր թիվով չկանան ել-մուր անեն»:

Խորխուրդ կանի, ծովու վերեն մեկ էնպես քյոշկ սարա շինել կուտա, որ ինոր պյություն ալաթներ, դռներ, պատեր գեյրաններ հըմեն դամյուրիյ, երկթիյ կէլնի, մեջ ինոր նիշուն էօդին կդնի ուր լաճ, խետն էլ մենակ մեյ լալա:

Տյեն էսա տեղ կմնա, կմեծանա, կուտի կխմի ուր լալի խետ քեֆ կանի, տյուս չէլնե չյում տսնխիյնգ տարի: Ավուր մեկ լալենը մեղրի մոմիյ մեյ խապ կարիճ կշինի, որ նշանյ կուտա թագավուրու լաճուն, էն շատ կուրախանա:

- Սեյ տեսնամ, մեյ տեսնամ, - կասի, կառնի լալի ձեռնիյ կդնի մեջ ուր ափին:

Ասրծու խրատանքյով կարիճը մեջ ինոր ափին կսալանա, ափան մեջ կխեթի, թագավուրու լաճ էն ցավիյ կմեռնի:

Խեղճ լալեն էլ ուր սրտի ցավիյ ուր կթալի ծովու մեջ կխեղտվի: Ինոնց խաց, ճյուր պիրող մարդերը որ կիմանան, կէրթան թագավուրուն կասեն: Էլ ի՞նչ, պանը պանիյն էլեր ի. տղեն մեռեր ի, լալեն էլ ծովու մեջ խեղտվեր ի:

Իսոնց վերեն թագավորը քյառսուն օր, քյառսուն գիշեր սուլյգ կանի, փառյք կուտա ասրծուն, կասի. ինչ որ ճակտին գրված ի, մարդը էն կտիսնա: